

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ· — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· — ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843–1898 ՀԱՏՈՐ ԾԵ ՅԱՆՈՒԱՐ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆ

ԱԲՐԱՀԱՄ ԲԱՀԱՆԱՑ Կ. ՊՈԼՍԵՑԻ

Ժամանակակից Տիզրանակերտցի Աւետիքին, և անոր պէս մինչեւ ցայժմ անծանօթ մնացեալ, հետաքնին, լաւ եւս, ընաքնին անձ և գրիչ մի է՝ Աբրահամ քահանայս, նուազ գիտուն քան զառաջինն, բայց եղական և նշանաւոր ի գրականութեան մերում, իր սիրած, դիտած, ընտրած և գրած առարկային համար, որ է Կենդանաբանութիւն։ Ռամիկ գրուած, այլ կրնայ ըսուիլ ինքնագիր և իսկատիպ. վասն զի մինչեւ հիմայ այս բնական գիտութեան վրայօք յատուկ գրող մի (գուցէ եղած ըլլայ) բայց յայտնուած չէ ի հայս. Մխիթար Գոշ և իրեն հետեւողք՝ բարոյականի նկատմամբ յիշած և յայտնած են, ինչպէս բուսոց՝ նա և քանի մի կենդանեաց բնութիւնը, մէկ երկու տողով. բժշկագիրք այլ աւելի, մանաւանդ ճոխագոյնն Ամիրտովլաթ, պատճառաւ անոնց բժշկական կամ դեղական օգտութեանց. սակայն Աբրահամ միայն ուզեր է ամենայն ցեղ կենդանեաց վրայօք գրել, կարճ կամ երկար, և շատն իր տեսութեամբ և գննութեամբ, և ոչ՝ կամ շատ քիչ՝ ի գրոց. թերեւս ունէր Ամիրտովլաթայ գրածները, բայց չէ յիշած և ոչ առած անոնցմէ. միայն կենդանեաց նկարագրութենէն զուրս՝ նիւթոց վրայ գրածէն առած է, նոյնպէս և ուրիշ քանի մի բժշկական և բնական իրաց, ինչպէս են կաթի, միզի և մսի տեսակը. եռքի (մսի վրայ) գրուածն անկատար մնայ գրոցը